

Հ Ա Ս Ե

Rédaction du Journal arménien

ARCHALOUYIC

(EGYPTE)

LE CAIRE

Ձի հրատարակումս ձեռնարկները
ես չե՛նք տրուիր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ
ծանուցումները կ'ընդունուին մասնա-
ւոր համաձայնութեամբ :

Հարս - Ներ - Խոհարարական
ԵՂԻՄԷ ԹՈՐՈՍԵԱՆ



ԱԶԳԱՅԻՆ . ԳՐԱԿԱՆ . ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԻ ՀԱՅԱՐԵՐԹ

ՊՈՍՏԱԼ

ԵՂԻՄՈՍ

Տարեկան գր. ողջ

30

ԱՐՏԱՍԱԶՄԱՆ

Տարեկան ֆրանկ

10

Պայմանագրի ՅԱԵԼՈՒՄ ԵՆՈՒ փոխարէն
վերադառնալ գրեմ պիտի ըլլան :

Թի՛ ԱՐՇԱԼՈՍԻ եւ քի՛ ՏՊԱՐԱՆԻՆ
վերաբերեալ նախակալ խնդրոց համար
պիտի է դիմել նախարարական հասցեով
քեզիս Մասնախարին , որ է՛

ԳՐՈՐԻ ՓՈՓՈՔՈՍ

40 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ՕՐԵՐԸ

Յօդուածայիններ ուղղակի գրաստիստու-
տու են իրենց գրածներով

ZUSE 40 ՓԱՄԱ ՈՂՁ

ՅՅ ԵՐՈՐԻ - ՏԱՐԻ

Մ Շ Ա Կ

ՀՐԹԱՆԻՐ
ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Բաժանորդագրութիւնը . Ռուսիա՝ (10) Բուրլի , Ամերիկա՝ (6) Տուլար ,
Արտասահման (30) Ֆրանս . Ստորագրուել կարելի է միայն ամսի
մէկից . Ամէն լիզուով յայտարարութիւններ կ'ընդունուին : Ապառիկ
բաժանորդագրութիւն չի ընդունում :

Հասցէ՝ Rédaction du journal arménien

MECHAK

Russie

TIFLIS (Caucase)

ԾՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ա՞Ր Տ՞Ր Ա՞ՍՈՒՏՄԱՆ
Dr. R. GOLDMANN

Ռնգային Բօլիբներու (Polype)
ենթակայ՝ Տր. Ռ. Կոլտմանի գիտե-
լով դարձանելու և բուժելու մե-
թոտէն խիստ գո՛՛՛՛ մնացի, ըստ ո-
րում հրապարակու շնորհակալու-
թիւնս կը յայտնեմ, նշանաւոր մաս-
նագէտին որ հաստատուած է Բրե՛՛՛՛
Լիօնէ ի վերին յարկը :

ՂԱԶԱՐՈՍ ՊՈՐՃԱՆԵԱՆ

ՄԵՆՔ ԵՒ ԱՆՈՆՔ

Մենք՝ կուշտերը . անոնք՝ ընա-
գաւառի անօթիները
Բառեր կան, որոնք իրենց ուսմ-
կութեան մէջ այնքան պերճախօս
են որ ամենէն անուանի հետադիմ-
բուն անգամ, բան մը չ'են կրնար
աւելցնել անոնց սրտազուարճ կամ
սարսուցացուցիչ իմաստին : Այս կար-
գին կը պատկանին նաև կոչոց և ա-
նորի բառերը :
Սրգ . մինչ մենք կուշտ ու կուռ
մեր ինչք ին կը նայինք ԱՆՈՆՔ ա-
նօթուկներէ կը տառապին : Չկայ
հայ թերթ մը որ իր մէջ մի թիւով
չ'արձագանգէ աղիկաւոր ճիշտ ու
որոնք ելէկարական հոսանքի պէս
բնագաւառի օգբեր պատուելով կը
մթազենն արտասահմանի վճիռ և
անքոյթ հորիզոնը
Բայց որոնք են ԱՆՈՆՔ
Մեզի արեւակից և հայրենակից ըլ-
լալէն տարբեր հանգամանք մ'ունին

մեր գուժը շարժելու համար իրենց
վրայ :
Թէև էակի մը յանդիմանի են .
թարկուած զրկանքը պէտք է բաւէ
ամբողջ աշխարհ մը տակն ու վրայ
ընելու, բայց մարդկային անտար-
բերութիւնը կը պահանջէ գիտնալ
այն պատճառները, յանուն որոնց
ինք կը խթանուի իր արքիւն աչքե-
րը բանալու մի քիչ Ուստի
տեսնենք թէ ԱՆՈՆՔ որոնք են :
Եթէ Հայութիւնը նկատենք իր-
ըն ծառ մը բարձրաբերձ և բազմա-
ճիւղ, անոր հիւթասուտ արմատներն
են ԱՆՈՆՔ :
Եթէ Հայութիւնը նկատենք իր-
ըն նաև մը՝ նետուած անծայրածիր
ՈՎԷ՛՛՛՛նի վրայ, զայն գէպի նաւա-
հանգիստ քշող քնքոյշ հովիկ և լու-
սաշող բեռնաստղերն են ԱՆՈՆՔ :
Մէկ խօսքով, Հայութեան կեն-
ՍԱՊԱՐԳԵԻ ՁԻՂԵՐԻ ԵՆ ԱՆՈՆՔ ա-
ռանց փոխարեւութեան
Գէթ այս անգամ անտեղի է
հարցնել « ո՞ր մի Հայութեան » :
Հակառակ մեր բաժան բաժան և եր-
բեմն ալ իրերամարտ տարրեք ըլլա-
լուն՝ յեղափոխականը և հակայեղա-
փոխականը, չեզոքն ու մասնիչը
բնագաւառի այսօրուան այդ սով-
եակներէն կենանք կ'առնէ, քանի որ
յանուն անոնց կ'ալըարացնէ իր ա-
րարքն ու կենցաղը : Արգարե և պահ
մը « ոչ գոյ » ենթադրեմք այն տա-
րաբաղդ հայրենի հողին վրայ մնա-
ցածները, և ահա մեր բոլոր կու-
սակցութիւնները, մեր վսեմ իղձերը
ու ստորնաքարը կիրքերը՝ իրենց գո-
յութեան իրաւունքը անգաւառալի-
րէն կորսնցուցած պիտի ըլլան : Ալ,
անկէ ետքը, ո՞ր մի թշնամիին կամ
համակիրին հողը պիտի ըլլան ար-
տասահման ցերրուցան ու բազմերանդ
մի քանի հայ գաղթականութիւնք :
Մեր անցած դարերու գաղթական-

նութեանց վրայ ո՞ր մի քաղաքա-
գէտ իր քունը փախուց, թափա-
ռայած գնչուները ո՞ր մի պետական
մարդուն մարտողութիւնը կը վրդո-
վեն
Ուրեմն, եթէ ոչ յանուն մարդ-
կութեան, եթէ ոչ յանուն արեւակ-
ցութեան, գննէ յանուն մեր իսկ
գոյութեան, կամ՝ աւելի բրտորէն
խօսելով՝ մեր շահերը պահպանելու
համար կը պարտինք ԱՆՈՆՔ օգնու-
թեան փութալ, կը պարտինք ՉԱ-
ՆՈՆՔ ապրեցնել Սե այս պար-
տականութիւնը կը ծանրանայ Հայ
ազգին ամբողջութեան վրայ, ա-
ռանց բացառելու և ոչ մի անհատ :
Ահա թշնամի մը, ՍՈՒՂ, զոր՝
թերևս առաջին անգամ ըլլալով եղ-
բայրաբար քով քովի կեցած՝ կրնան
անխնայօրէն գնդակահարել Հնչակեա-
նըն ու Դաշնակցականը, Արմենակա-
նըն ու չեզոքը, հարուստն ու ալ-
քաթը, թրքահայն ու ռուսահայը,
հայրենասէրն ու ազգատեսցը և այդ՝
ինչպէս ըսի, նոյն իսկ իրենց վեհ
կամ խայտառակ շահերն ապահովե-
լու համար :
Բայց, պիտի ըսուի, դրամ
պէտք է, շա՛տ դրամ :
Անշուշտ, առանց դրամի բան
մ'ալ չ'ըլլար : Առանց դրամի ո՛չ
ուէրովէր կը դնուի եղբայրակիցնե-
րու գլուխը պայթեցնելու համար,
ոչ ռազմամթերք կը հայթայթուի
իրաւամբ մոլեղանձ՝ բայց իր վրէժ-
խնդրութեան մէջ անբարդատելի-
րէն վատ մի որ և է Դաշնակցի մը
ձեռքով թշնամիի յանձնելու համար
. . . . շատոնց բուռած է որ դրամը
պատեքազմի լիզնէ . բայց այս պա-
տերազմը, զոր կրնանք պատրաստել
և մղել օր ցորեկով, մեզի պիտի
ապահովէ ամբողջ աշխարհի ձեռն-
տուութիւնը, եթէ մի միայն մենք
շարժիլ գիտնանք
Փոխանակ ինչպէս դրեթէ միշտ,
մեր ձեռքերը ծալելով, օտարնե-
րուն « ամա՛ն », օգնութեան հասէք :
աղբիւրներու ցածողի մուրացիանե-
րու պէս . եթէ մենք ինքնաբերա-
բար և տիպար ինքնօգնութեամբ մը
ԱՆՈՆՔ ձեռք կարկառենք, հաւա-
տացէք որ նոյն իսկ օտարին լուծա-
յին հարկ չ'պիտի մնայ, ինչ որ մեր
փառապսակը պիտի ըլլայ, և ո՛վ
դիտէ, թերևս մեր միւս դատին
ալ՝ կարծուածէն աւելի նպաստաւոր
եղք մը պիտի տայ :

փոխացնելու համար, շնորհիւ այն
երկու գէնքերուն որոնք կը կաշուին
ՀՍՑ և ՍԵՐՄՆՅՈՒ :
Նայի, պէտքը կ'ղգամ միան-
գամ ընդ միշտ յայտարարելու որ
ես կողմակից չ'եմ այն դաւթեան
որ միշտ կը գործածուի հասցի մը
ձեռք բերելու համար . այսինքն,
հակառակ եմ պարահանդէսներ, թա-
տերական ներկայացումներ, վիճա-
կահանութիւններ և ինչ . ոտքեր-
լու գաղափարին : Ինձի այնպէս կը
թուի թէ այս աղբիւրներէ հոսած
գրամը ճերմակերես կը հանէ « նպա-
տակը մեղցնելը կ'արդարացնէ »
բանաձևը : Բանաձև որ հակաբնա-
կան, լըրճակ, վատ իմաստ մ'ուն-
նի, գէթ ինձի համար . ես կը փա-
փաքիմ որ մի որ և է նպատակը
ըլլայ այս կամ այն կերպով փոխա-
րինուելու, ցուցադրուելու, « ես » ը
փաղաքոյց և բարոյապան հանգա-
մանքներէն : Հակառակ եմ նաև բե-
ոք մէկ կամ աւելի անհասանելուն
վրայ ձգելու գաղափարին, եթէ ա-
նոնք կրետաներ ալ ըլլան . վասն զի
այս միջոցը թէ՛ ազգակցութեան
արժանապատուութիւնը կը վիրա-
ւորէ և թէ՛ ազգին վզին վրայ լու-
ծեր կը դնէ Ազատութեան
առաջին պայմանը լայնախոհութիւ-
նըն է : Ի՞նչու և ի՞նչ իրաւունքով
գործ մը մի միայն չորս հոգիի վը-
րայ ձգեմ, երբ ես ալ կրնամ բան
մ'ընել, նոյն իսկ եթէ ամենէն ան-
նըշան ալ ըլլայ այդ բանը : Ո՛վ չը
գիտեր որ հիւլէ մը ինքնին աննըշ-
մարելի, անջօշակիչի, աներևակա-
յի լիօրէն նուրը առակայ մ'է, բայց
այդ հիւլէներու համախմբումէն
կազմուած են հանքերը, լեռները
և աշխարհները
Ուստի ես պիտի ուզէի որ ամ-
բողջ հայ ալըութիւնը, անհատա-
բար առնուելով, մասնակցէր ընա-
գաւառի մեր հայրենի ու մայրերը,
եղբայրներն ու քոյրերը անվրէպ կո-
րուստէ մ'ազատելու նախախնամա-
կան գործին :
Ես այս ալ ոչ միայն գեղուար
չէ՛ այլ աշխարհիս ամենէն դիւրին
բանն է, ձգուած ըլլալով ամեն
մարդուն կամքին, խղճին, պարտա-
ճանաչութեան :
Եղիպտոսի հողին վրայ առ-
նուազն տանտեակ հայար մը հայ-
րենակիցներ կը գտնուինք : Ես պի-
տի բանձ հինգ հազար : Այս հինգ
հազար հողին մէջ արդեօք պիտի
գտնուի՞ անձ մը, որ գեղամակի օ-
րը քսան փարայ յատկացնել իրեն
նման մարդու մը, քաջ գիտնալով

որ առանց այս ոչինչի, այդ մարդը պիտի մեռնի: Մարդկութեան պատիւը, անհատական արժանապատուութիւնը, բնագոյնի դրդումը կը պահանջեն ժխտական պատասխան մը տալ: ո՛չ, այս չնչին նպատակը զլացող մարդ անունով էակ չգտնուիր: Ենթադրենք թէ այս օգնութիւնը պիտի տեսէ ամբողջ ամիս մը: Ո՞րն է այն անձը որ պիտի վարանի կեանք մը ազատել տասնըֆինգ զրոյ: Ի փրկագինով մը՝ դարձեալ հաստատապէս կ'ըսենք: ո՛չ ոք: Եւ եթէ փրկուելիք անձը նոյն իսկ մեր անունը, մեր արեւը կրող մէկը ըլլայ, և որուն գծրադրութեան քիչ շատ մենք պատճառ եղած ըլլանք, այն ատեն մեր օգնութիւնը ո՞րքան անելի փութկաւ, ո՞րքան անելի սրտաբուրդս պէտք է ըլլայ: . . .

Այդ հինգ հազար անձերը, որոնց մէջ կը գտնուի նաև այս տուղերը գրողը, որը առ նուազն երկու երեք զրոյ: Կը նետեն միմիայն իրենց ֆէյնիկ համար: Արդ, զուարճութեան յատկացուած դուժարի մը մէկ չորոչդը կամ մէկ վեցերորդը խնայելով զուարճանքը ապահովապէս բան մը չկորսնցնելը ընդհակառակն թէ՛ իր առողջութեան նուազ ֆլաւամբ և թէ՛ անդին կեանք մը ազատած կ'ըլլայ, ինչ որ պիտի բան մը չ'է: . . .

Կարծեմ միտքս ըմբռնեցի՞ք:

Այո՛, կ'առաջարկեմ որ Անննձ սպառնացող անողք մահուան դէմ կռիւր մենք սկսինք: մենք՝ Եգիպտահայերս:

Հինգ հազար հոգի ենթադրեցինք մեր գաղութը: Արդ, հինգ հազար հոգիի օրական աննշմարելի խնայողութիւնը կ'ընէ քսանըֆինգ ոսկի և մէկ ամուսն մէջ կ'ըլլայ եօթը հարիւր յիսուն ոսկի: Բայց որպէս զի ուշ չմնանք և մեր օգնութիւնը իրական և արդիւնաբեր ըլլայ, ամսոյն վերջնաւուն չ'սպասենք, այլ այսօրուրէն պատրաստուինք մարդ զուլ տասնըֆինգ զրոյ: Ըյանձնելու այն Մասնախումբին, զոր կը յուսամք թէ Առաջնորդարանը կամ երկու Առաջնորդարանները և Աւետարանական եկեղեցին պիտի փութան կազմել, առանց ներկայ կամ բացակայ շրջերուն հետ թղթակցութեամբ կամ հեռագրակցութեամբ ժամանակ կորսնցնելու: Լաւ խորհինք և փութանք: անդին անօթի ստամոքսներ, կմախքացած մարմիններ քայքայուած կեանքեր, կաթնաղուրկ ծծկերներ սպասելու ժամանակ չ'ունին: Անգամ մը երեւակայինք թէ մենք ինչ պիտի ընէինք կամ որպիսի ապօրինութեանց յանձնառու չպիտի ըլլայինք եթէ մեր ամենամօտ սիրելիները անօթութեան անյաւ կրծումներու ենթակայ տեսնէինք: . . . Անոնց ալ մեղքնանք: Թոյլ չտանք որ մեզ անխելով անչնչանան, կամ թէ՛ իրենք ամչնալով և թէ՛ մեզ վարկաբեկելով ապրին: . . .

Գիտեմ, իմ կողմէս ենթադրուած գումարը գրեթէ աննշան բան մ'է: Բայց ո՞վ չ'յուսար թէ բազմապատկուած չպիտի գտնուի իրականութեան մէջ: Եւ որովհետեւ, չնորհիւ անհատական գրեթէ ոչինչ գոհողութեան, չ'եմ կարծել որ երկրագործութեան վրայ գտնուի հայ մը որ մեզ օրինակին չհետեւի, կրնանք հիմակուրնէ վստահ ըլլալ թէ Մայր Հայրենիքի սովեակները պիտի ազատին ապահովապէս:

Եթէ սոյն առաջարկս անգործ

ծաղրելի կամ մի որ և է կերպով ֆլաստառիթ թելադրանքէ զերծ դատուի, պիտի խնդրէի, և այս յանուն Անննձ, որ ազգային բոլոր թերթերը հաճէին իրենց հոգը ձայնով ձայնակից ըլլալ ինձի:

Ա. ՊԱԼԵԱՆ

Յ. Գ. Կազմուելիք Մասնախումբին տրամադրութեան տակ կը գնեմ իմ համեստ նպաստն: որ է՝ մէկ Անդրեական ոսկի:

Ա. Պ

ԻՄ ՍԵՐԸ

Սերս իր քափով շնուային վճիտ
ստուի է նման .
Որ ծնունդ կառնէ խոր, անհասցելի
անստուի սրից,
Եւ քաղնուելով դաշտերի մէջ՝
կանգնի կուսական
ծնրպերի մոտից .

Համբոյր կը ցօղի մեծաւոր ծաղիկի
սխոր ճակատին,
Կենսունակութիւն՝ սրելի կարօս
բաղդի ու խոտին,
Եւ քե ո՛ւր կերպայ, ո՛ր աւազի սակ
նա կ'անհետանայ -
Սիրելի բոյրիկ - կը մնայ գաղտնի,
այդ չե՛ս իմանայ:
(Յուշարար) ԹԱԿՈՐ ԹԱԿՈՐԵԱՆ

ՊԱՇՏՈՆԵԱՅ ԿՈՒՉՈՒԻ

Վաճառատան մը համար պաշտօնեայի մը պէտքը կայ, սր գիտնայ քիչ շատ Արաբերէն և հմուտ ըլլայ կամ Թրանսերէն և կամ Անգլիերէն լեզուներէն մին անպայման կերպով:

Ամասկան դռնացուցիչ:
Դիմել դրաւոր կերպով՝ Նամակատուի թիւ 904:

ԱՐՇՅ

Աւա՛ղ, Լո՛ւսին, դուք աստղեր,
Բոյր աշխարհ քոյ արեւ
Եւ ըլլաւ ֆեղ կ'ըսեն.
Թո՛ղ, արեւոյդ երազ են:
Նո՛ւարդ գոցեց իմ Սոկրատ
Աստուած մը կայ անարատ:
Գուք սարածե՛ք արեւ,
Ո՛վ, որովհ զիսնակ խե՛ղ:

Հնու մի՛ յուսար, է՛ դերեւ,
Սեղաբ բաղդը գայ քեքեւ,
Ճգնե՛ք սակի զուժարեւ,
Էն՛ վերեւ և ըսի, Տէ՛ր:

Թողի՛ք ըլլայ ինձ քամիկ,
Ես եմ որ սակիմ աստղին,
Ա՛ն հուր, մըրուր սրակին,
Նո՛ր երազ, արեւ աշխարհին:
17 Մարտ 908 ԵԱՀԷՆ

ԲՈՆԱԶՐՕՍԻԿ ՔԱՅ ՔԱՅԸ

Տեղ Աւիսիս Բեկ. Եւրոպայի

«Արշալոյս» ի 487-15 թթ թուով Տէր Աւետիս Գրանապ Եւրոպայի անվայել ու աննեղելի մէկ արարքը պատմուած էր իմ կողմէ:

Տէր Եւրոպայի ինքզինքը միսթարել կեղծելու, և իւրի պէս ջուրին երեսը կ'ըլլելով արդարացած ձեւանալու համար, Պէն - Էլ - Սուրէնի ուղղահայեաց գծին վրայ իր ճարտար կողորդէն քա՛հ - քահնէր արտաթորած էր, որուն

արձագանգը քահն մը վայրկեան վերջ մեղի հասաւ: . . .

Իմ կողմէ պատմուած միջադէպին տիրաւորի իրականութիւնն մը ըլլալը չեղտուի համար, բաւական կը համարիմ ըսել թէ՛ 1906 Հոկտեմբեր ամսոյ վերջերս - « մասնաշախի » այդ սխալի գէպքէն 3-4 օր յետոյ - զբաւորապէս մասնաժամանակ եմ մէկ քանի բարեկամներու, և ազգային բարձրագոյն իշխանութիւնը ներկայացնող Երեսփոխան Ժողովոյ անդամներէն ոմանց, որոցմէ երկու անուն միայն պիտի յիշատակեմ՝ և տարակոյս չունիմ թէ ամէն առարկութիւններ տեղի պիտի տան ասոնց առջև: Ասոնցմէ մին է Աղնուաշուք Մկրտիչ Էֆէնտի Անդրանիկեան (Երեսփոխան) իսկ միւսը՝ Մեծայարգ Տիար Միհրան Թեղեան, փոստաբան - խորհրդական Աղէքսանդրի թաղական Խորհրդոյն: Տիար Մ. Թէլեանին գրելու պարտական էր բացարձակապէս: որովհետեւ, նախ՝ այդ խնդրոց արժատին հետ տեսակ մը կապակցութիւն ունէր, և երկրորդ՝ իմ բանտարկութեանս ազգած սրտմաշուք թեթեւեղ ջանացած էր իր նամակներով, հոգ չէր թէ մեր փոխանակած թղթակցութիւնները շատ միսթարական պարտականութիւններ ունեցած չ'ըլլային վերապահեալ պատճառներով:

Վերոյիշեալ երկու նամակներուն, ինչպէս նաև զանազան ատիթներով ուրիշներու գրուած համատու և ընդհանր 500 ի չափ նամակներու օրինակները պահուած են տակաւին, ու պէտքը կա՛յ ըսելու թէ՛ հակառակ արպիւրակ վիճակիս, կանոնաւոր թըղթակցութիւններ ընկու միջոցներ ըստեղծած էի, երբեմն վարչութեան միջոցաւ (պաշտօնականները) ու շատ անգամ զազանի (բարեկամներու . . .):

Տէր Աւետիս Եւրոպայի, որ շատ անելի կանխին արդէն կը մասնակցէր իմ տունին հիմերը քանդուելու և զիս ոչնչացնելու ոճրախանձ գործառնութեանց, կարծելով թէ՛ իր երեսին անցուցած դիմակին ներքեւէն իր կեղծ ու պատիւր և խաբէական վարպետորդութիւնները անտեսանելի էին ինձ, այդ վերջին տիրաւորակ պատգամաւորութիւնն ալ իր վրայ առած էր, առանց երբէք միտքէն անցնելու թէ՛ իր զէմը եղող բաւականին շատ անելի սուր յիշողութեան, և նոյնչափ ու քիչ մ'ալ անելի դատողութեան տէր մէկն էր: Իսկ երբ « Արշալոյս » ի 487-15 թթ թիւը տեղէ մը ձեռք անցնելով կը կարգայ, իր սրտին մորմորք և խղճին հարուածները բունաբոսիկ քրքիչին և որոտածայն քա՛հ քահն մէջ հովաբերի կը փորձէ: . . .

Քանի որ այդպէս է, ուրեմն պէտք կ'ըլլայ ուրիշ մէկ երկու կարեւոր պարագաներ ալ յիշեցնել իրեն, որպէսզի իր քրքիչներն ու քահնանները անելի որոտածայն օգին մէջ սլացնեն, պղտիկ ու վտիտ թռչնիկներուն . . . ճուղիւնները անխելի ընկու տկար ջանքերուն մէջ յաջողելու համար: Թեթեւ . . .

Բայց կրնայ ըլլալ որ ինքն ալ ուրիշ շատերու պէս խորուած ըլլայ, ու արդի ըսուածները հիասթափեցնեն զինքը, և ատիթ մը ըլլայ սա՛ իր տուրբական պաշտօնին պարտականութեանցը դէմ չ'մեղանչելու փոյթն ունենալ, եթէ վերջապէս ուզէ ձանչնալ յարգը այդ « նուրբականութիւն » ըսուածին: . . .

Եթէ իմ մերկացումներու հետեւանքը եղող գրուածները քեզի քրքրեցին կ'առթեն, Տէ՛ր պապա, թո՛ղ սուր որ չ'խնայիմ քեզի ուրիշ քանի մը բաներ ալ յիշեցնել, որոնք թերեւս անելի բազմապատկին քու ուրախութեան և քրքրալու պատճառները: Կը յիշե՛ս, Տէ՛ր պապա, 1906 Մայիս 12 ի օրը, յորում միտսին ունենա-

լով փոքրիկ եղբայր խեղդող ու նեղուսը նետող ճերմոխարը՝ (. . .) Արտաշէս Յովսէփեան, որպէս թէ այցելութեան եկաք ինձ Ապտին Թէրզեաններու բընակարանը, ուր ես այդ օրերը գտնուելու ամենամեծ դժբաղդութիւնը ունեցայ: Կը յիշե՛ս կ'ըսեմ, թէ ի՞նչ խօսեցանք այդ օրը, եթէ քննաչիլիկ մը չէր կը յիշե՛ս թէ Պ. Գարեգին Պահլաւունիէն յատկապէս խնդրած էի որ այդ սրիկայ թշուառականը ուրիշ անգամ իմ թով չ'գայ: Եթէ ատենք չես յիշեր, ահա բառ սո բառ մեր խօսակցութիւնը, որոնց՝ հակառակ իմ տարապայան զայրոյթիս և իմ բազմակողմանի արխրութիւններու, զուարթ չեալ մը տալ կը փորձէի: . . .

Դուսն. - Ինչպէս ես նայիմք.
Ես. - աղէկ եմ՝ բայց աչքերս կը ցաւին: . . .

Դուսն. - Ե՛հ, ի՞նչ կայ չ'կայ . . .
Ես. - Ի՞նչ պիտի կենայ, պատասխանեցի հեղինակով, « Մանգուձ » ի թերթին (այդ օրերը՝ 40 փարայով աշխարհի շրջանը տիրադուրով վէպ մը կը հրատարակուէր իբր թերթի) հերոս Լաւրաճեանի պէս 40 փարայով աշխարհի շրջանը չ'ընեմ կոր: . . .

Ընկերը (կաւտարարոյ Արտաշէս Յովսէփեանը) - է՛հ, ի՞նչ տեսար աշխարհի շրջանը կատարելու ստան . . .

Ես. (զարկելով զէպի այդ աննկարագրելի անբարոյականը զգացած ապագայման զայրոյթիս) - Ետտ բուն տեսայ, ըսի, բայց անոնցմէ մէկ հատը միայն ըսեմ. ու դառն չեչտով մը յարեցի, դիտես պարո՛ն, ըսի, Ապրիլ 7 ին ինձի մատակարարած ԹՈՅՆԵՐՏՈ՛Ւ և է ազգեցութիւն չ'ըրին. բայց երկու օրի չափ գլխի ստակալի պտոյտէ մը և աղիքներու բաւական ծանր խիթերէ մը: . . . Հիմակուսն աչքերուս ցաւերն ալ, շատ հաւանական է որ եթէ այդ թոյներուն ազդեցութիւնը չէին, ուրեմն, սիրելի ազգակալիկ ու գաղափարակցի պարոն Խաչատուր Եւրոպայեանի բնակարանին մէջ կատարուած խեղդելու ոճրախորձէն առաջացաւ . . .

Մէկալը, (լրբարարոյ Յովսէփեանը) - իմ բերած զեղերս պէտք էր որ թէ՛ ինձ ման եկելու ժամանակ գտնէի՛ . . .

Այս խօսակցութեան ատեն իրարու շատ մօտ նստած էինք: Տէ՛ր պապա, կատակ կտրեցիր թէ բանազգուցանք, չէնէ մի ձեռ գործին ալ առանկ կը յարմարէր, և ոճրախորձութեան մը ազգչափ մօտն գիտակ ձեւանալը անձնական շահերու կը փնտէին . . .

Ինչու՞ մեղսակից լուծիւն պահեցիր, ինչու՞ այդ եղելութիւնները որ զէպքին բուն պատճառները քեզի հատկեղելու համար իմ կողմէ ըսուեցան, ազգային իշխանութեանց չի ծանուցիր, որպէս զի մտադրուած այդ ոճրան առջև անտուէր: Բայց ինչու՞ այսպէս մտածել, քանի որ այդ չարաշուք օրուսն նախընդօրը՝ Առաջնորդարանի մէջ, Գեր. Աղաւնուսի Առաջնորդին թով իսկ՝ ժխտեցար յայտարարելու թէ՛ ինձի հետ գործ ունեցողները բանաւոր (. . .) պատճառներ ունին, որովհետեւ Հանգուցեալ Երմանեան Եպիսկոպոսի « Իմ Աքսորի կեանքը » հրատարակելու ձեռնարկած էի: Ըստ՝ այլեւս արժէքը բոլորովին կորսնցուցած բանաձեւին, մատնիչ էի, չէ՛ մի: . . .

Պէտք կա՛յ անգամ մը եւս յայտարարելու թէ՛ չափազանցօրէն զէջ ըմբռնած ես քահնանայական սխալոց, ինչեւ անգամ « Աքսորի կեանք » ինչպէս աննման հազուադէպ ու չքնադադրելու հեղինակութիւն մը չի թիկնով թուողորմելի « ԺՈՒՌՈՒՅՈՒՄՆԵՐՏՈՒՅՏ » եւ ուրիշներու հետ: Այդ էր քու ճշմարիտ կղերի պարտականութիւնը: Սակայն ինչու՞ սարակուսիլ թէ՛ այդ սուրբ կոչումին համապատասխանող ամէն ազնիւ զգացումէ և պարտաճանաչութենէ

զուրկ էր, քանզի եղած է ժամանակ ալ որ խաղաղ մէկ կողմ դրած եւ, Անտան եւ չքանու համար, զանազան հաշիւներու զոհերով քեզի պատուրուած այդ սքեմը . . . Լսելով չէ որ կը գրեմ զայս, պէտք եղած է որ՝ դուն ինքզ ըսես ինձի :

Լաւ գիտցիր, Տէ՛ր պապա, այսօր ինձի կ'ընեն վազն ալ քեզի եւ ուրիշներուն թերեւս, որովհետեւ հիմա մեր ազգին ճակատագիրը դժբախտի սեւ մըրուովը գրուած է, ու մեր « փրկիչ » - ներուն չարաշար եւ հոյակապ սխալումները՝ նորանոր ոճերներով ծածկել ջանալէ զատ ուրիշ միջոց մտացած չէ՛ . աւա՛ղ . . .

Ասկէ աւելին պէտք չկայ առ այժմ : Միայն թէ չըլլա՛յ որ ասկէ վերջ ըսու միւս « ԾՈՒԽԵՐՈՒԿ » նա ալ՝ ինձի հետ ունեցած իդ պէս անպարտաճանաչի վարուելը ունենաս . . .

Սա լաւ գիտցիր որ, Տէ՛ր պապա, իմ հիւանդանոցը փակուած ժամանակս անգամ, ըսե իւրաքանչիւր քայլերդ համարած եմ - պարծանք չըլլայ այս : Եթէ ըսած իմ վրայ կը տարակուսիս, քեզի յարգելի անուններ տամ, ու գնա՛ւ անոնց քով իմ գրած նամակներէս հաստատէ, եթէ բաւական չէ՛ ազատուէս յետոյ յատկապէս պահանջեալ արդի Պատ. Քաղաք. Ժողովէն որ իմ գործերուն մէջ չ'մտնես այլ ես . . . Իսկ այս ըսած իմ վկայ են՝ Գեորգ. Առաջնորդը, որուն տակաւին իմ վերջին խօսքերս ըսած չեմ Սեղաբէք էֆ. Դաւթեան, Հայկ էֆ. Ինայէթեան, Վառամ էֆ. Գալփաքեան եւ Միհրան էֆ. Ղազարոսեան եւ այլն :

Իրաւ է, 1906 Յուլիս ամսոյ մէջ ինձի տուած այցելութեանը առթիւ նըպատաւաւ տեղեկագիրք մը տուած ես Առաջնորդարանին ստորագրութեանը ներքեւ, եւ առաջնորդարանը գտնուած իմ ՊԱՐՈՒԹԱՅԻՄ մէջ պատահաբար սեսայ զայն, բայց ինչո՞ւ, ինչո՞ւ կ'ըսեմ. քանի որ գիտէիք թէ ես յանձնարարեալ արգելափակուած եմ, ըսե բոլոր ջանքերդ չ'թափեցիր՝ վերկելու համար ըսե ԾՈՒԽԵՐՈՒԿ վերահաս վտանգներէ . . . ու ասիկայ չընելէ զատ՝ այդ տարւոյն Հոկտեմբերին մէջ ալ հկար, յանուն այն ատենուան Ժողովին, Տնօրինութեան ծանուցանելու թէ՛ ես անիշխանական եմ. թէ՛ սանկ եմ նա՛նկ եմ : Վախելո՛ւն էր այս : Հաշուէ՛ անգամ մը 1906 ի Յուլիսին մինչեւ 907 Յունիս - ազատութիւն թուականը - ու տես՝ թէ՛ սա՛ չտի ա՛մ միսներ իմ բանտարկութիւնս երկարած է . . . ասիկայ ոճագործներու մեղապակութիւն չէ նէ՛ ինչ է ուրեմն, որ ի գործ գրիր, ինչ ինչ ինձի ծանօթ հաշիւներուդ համար . . .

Ուրիշ վերջուլումներ : Կը յիշե՛ս, Տէ՛ր պապա, այն օրը՝ երբ այդ չարահամար լրբութիւնները արձակ համարձակ գործուել սկսան, իմ հրաւերիս պատասխանելով մեզի եկար, ու Տր. Կ. Փաշաեան խանի եւ Ապահ Պետրոսեանի ուղղած նամակներու օրինակները կարդալէ յետոյ, « բայց պէտք է գիտնաս ըսիր որ՝ ըսե հակառակորդներդ « հիւօղի » են (ըսեն իսկ գործածած բողոք է :) Եթէ գիտէիր որ անոնք ինձի համար այսինքն թէն վարպետորդի են, ուրեմն կընդունէիր եւ գիտէիր թէ զիս չարաշար խոշտանգողներ կային, ու դուն այդ յայտարարութեանը մեղապակեց կ'ըլլայիր անոնց . բայց դուն՝ բարոյապէս ըսե վրայ ծանրացած նու իրական պարտականութիւնները զոհեցիր ինձի հետ լրբութիւն համար . . . ու ըսե ձեռքդ գանձուած միջոցներն ալ ի սպաս գրիր անոնց : Կը յիշե՛ս, Տէ՛ր պապա, դուն որ բարձրաձայն քահ քահ ըրած ես Պէն - էլ - Սուրբէնի փլատակներուն մէջ արձագանք տալու աստիճան : Կը յիշե՛ս կ'ըսեմ, երբ օր մը - 907 ի ծնունդէն քանի մը օր վերջ - Վառամ, Ազիզ Պէյրի, Ն. Վսեմութեան նոր փեսային - Կոտա-

վարչատան բժիշկ Ապտալա էֆէնտի - եւ անոր աղնիւ Տիկնոջ հետ հիւանդանոց այցելած էիր, անոնց ազգականներէն միոյն հետ տեսակցելու համար : Վսեմ. Ազիզ Պէյ Տնօրինութեան սենեակէ եղեր. - Ինձի այդպէս ըսին իսկ դո՛ւն Տէ՛ր պապա՛, զիս դուրս կանչելով ինչի՛ր ըսիր : Ու ըսե այդ « Մի - իրի՛ՄԱՐԱԿԱՆ » (. . .) խօսքերդ, կզերական պաշտօնիդ մէջ ունեցած գրեականութեանդ ցատուէն ապագոյցները կուտային անշուշտ . . . այնպէս չէ՛ :

Սյուրբ վարուելով ծաղրել կուզէիր մէկը, որ նոր տարիքի եւ ծնունդի նըման ուրախութեան օրերը միանկուկ եւ անմխիթար անցուցած էր ակամայ, բաղդազուրկներու եւ թշուառներու եւրամակի մը երկերդալի եւ յաւատ անախորժ ընկերակցութեան մէջ : Հարկ կայ՝ կրկնելու բոլոր ըսածներդ, մտիկ ըրէ՛ ուրեմն :

— Ե՛լ ըսիր, ե՛լ որ քեզի Տէ՛րաէր չի նենք . . . Կը հասկնայի խօսքիդ բուն իմաստը :

« Եթէ որդի ես Աստուծոյ, է՛ջ ի խաչէդ . » ըսող հրէից զպիւրներէն, փարիսեցիներէն ու մաքսաւորներէն ինչ տարբերութիւն ունեցար այդ պահուն : Քանի որ դիտէիր մանաւանդ թէ՛ ինձի կարատեւ ու յանրաւր բանտարկութեան մը պատճառ էին : Ուրեմն գիտակցաբար անոնց ոճրոյն մեղապակած չէիր ըլլար :

Կը յիշե՛ս, Տէ՛ր պապա, թէ քիչ մը մտածելէ յետոյ այդ հեղանկան խօսքերուդ վրայ, որոնք իմ սիրտս յօշոտելու բնօրթ ունէին, ինչ պատասխանեցի գաղտնագոյն չեղտով մը :

— Ինչ սէր հայր, Դուք հո՞ս փոխադրուել կուզէք, որպէսզի ինձի տե՛ղ բացուի « քահանայ » գասին մէջ . . .

Երանի թէ՛ ըսե եւ բոլոր համախոհներուդ ըրածները միմիայն իմ վրայ սահմանափակուէին : Ես սիրով ասկէ աւելիներն ալ կը տանէի թերեւս, Անրամանուի ալ իհօք բերելու համար . . . Բայց ինչ կուզէիք տկար կին արարածէ մը՝ որ զանազան առիթներու մէջ չէք մտցած զայն ալ չարաշարել : Իմ անկէ ստացած շատ մը նամակներս այդպէս կը հաստատեն : Եթէ տարակոյս ունիք, հաճեցէք զալ ըսու եւ տեսել ու կարդալ նոյն իսկ, իբրեւ խոստովանահայր . . . Դիտնալու համար թէ՛ ինչ աղեխարշ ճիշդ կը լսուին այդ նամակներէն եւ ինչ տրցունքներով շաղախուած են անոնք, որոնց նմանը Ասիոյ խորեղէն անգամ լսելը ներհիլի չ'պիտի գտնէր հայերէս եւ ո՛չ մէկը . . .

Սյո՛ւ. « սեւացիքեք » գրութեամբ՝ նախապէս հաղարաւոր անպարագրիլի ըսութիւններ, խարկանքներ եւ մտացած ինչ զրպարտութիւններ հնարելով՝ անոնցմով հրապարակը ողողեցիք, որպէս զի անգամ մը մի ին ակ կ'զիս, եւ ձեր անորակելի ծրարքին մէջ աստղին օրէն մինչեւ այս վայրկեանն ալ յաղողած էք :

Ուսանակիչ եւ ազատաբարոյ կին գործակալներ մէջ տեղ հանեցիք, որոնց ամենն ալ ծանօթ են ինձ իրենց բուն գերեզմուքը, ու ճնշումներու եւ ազգեցութեանց, նոյն իսկ սպանուիլիքներու ներքեւ գրիք կին էակ մը՝ զանազան առիթներով եւ պարտականութիւններով ստորագրութիւններ կարգելու համար անկէ՛ - որոնք բնականաբար նշանակութեան զուրկ կը մնան ամեն օրէնքի առջեւ - որպէս զի կերպով մը ձեր մեղսակիցը ըլլայ այն, եւ անոր սխալներովը զուրք ինքզինքնիդ կարենաք պաշտպանել . . . կամ նոյն իսկ՝ ո՛վ գիտէ, եթէ զուրք չ'կարողացար ձեր չարաղէտ նպատակին հասնել, գէթ անոր միջոցաբան մը կարենաք ընել . . . ասանց հաշուելու թէ անոր ալ կորուստը կը պատրաստէիք : Ասոնց յար եւ նման օրինակներ չեն եր կը պակսին հայկա-

կան արդի լարիւրներն ինքնին մէջ : Ի՞նչ ա՛մ ի թուելու պէտք չկայ . . .

Դուք ալ ինձի հետ չէ՞ք զարմանար, Տէ՛ր պապա, երբ այդ կինը քահանայ հիւանդանոց կ'այցելէ, կը պահանջէ զիս Տնօրինութեանէն, ու յետոյ երբ կ'ազատի՛ օրէնքի ուսով, այսօր ճիշդ տարի մըն է այլ եւ այլ պատըրուակներով բոզ անգամ թոյլ չ'տրուիր հանդիպելու, այլ՝ ընդհակառակը՝ գաղտնի միջոցներ ձեռք կ'առնուին ըստ սուսանուցի, որպէս զի անոր եղած զըրկանքներուն ալ չ'ծանօթանամ ես . . .

Ինչ մոգական ազդեցութիւն եւ ինչ խորախորհուրդ գաղտնիք կայ ասոր մէջ, որուն ես՝ ո՛չ մտէն եւ ո՛չ հեռիէն վերահասու չեմ կրնար կոր ըլլալ . . . զա՛ւ աւելի խաղաղասէր ու պարտաճանաչ կղերկուր գիտնալիք բանն է, այնպէս չէ՛ . . .

Եթէ այս կարգի բաներէ տեղեկութիւն չ'ունիք - բայց ինչպէս չէիք կրնար ունենալ - ուրեմն ինչ է ձեր պաշտօնը :

Եթէ ըսե խիղճդ - եթէ ունիս - չի տանջեր զքեզ այս ապշեցնող չարիքներուն ի յուր եւ ի տես, ու եթէ կարենաս հաստատել որ այս ըսուածներէն մին կամ միւսը սխալ են, իս պատրաստ եմ հրապարակաւ ետ առնելու այս բոլոր նկատողութիւններն ալ՝ եւ նոյն իսկ ներողութիւն խնդրելու : Իսկ հակառակ պարագային՝ օր մ'ալ եթէ ասոնք ներկայանայ, կարգ մը բաներ ալ պէտք պիտի ըլլայ յեղեցնելու քեզի՝ առաւել եւս զօրացնելու համար քահանայերդ, եթէ հակազդեցութեամբ մը չ'ափաղանց չ'տրիրս այն ատեն . . .

Հիասթափուեցէ՛ք, ամփոփուեցէ՛ք Տէ՛ր պապա, հայկական հորիզոնը անպարտաճանաչութեանց երեսէն՝ ձեր կարծածէն շատ ու շատ աւելի մտայն մէ վերջը ջրեղեղ թո՛ղ ըլլայ . . .

Փոխանակ չարիքը հասնելէն յետոյ զայն դարմանելու համար ձեռքերնիդ մէկուն ու միւսին երկարելով մտաբալու՛ ինչ որ փաստաբարութեան, եւ անուն մը չի նենքու՛ եւ քիչ մ'ալ կեղծ ազգասիրութեան հոմանիշ կը նկատեն մեղծէ աւելի գործէ հասկցողները : Ինչ տարեք որ բնւէ չարիք չ'գործուի : Իրական առաքելութիւնը եւ խղճի հանդարտութիւնը աւելի այդ տեղ կարելի է որոնել, քան մեծատուններու դրան առջեւ սըրլըքալուուն մէջ :

Իսկ ինձ համար, ես կրնամ իմ մըր խիթարութիւններս դժբաղդութեանց մէջ իսկ փնտռել : Տե՛ղն է որ Պօսթմոնի « Արծիւ » կիսամտէի խմբագրին հետեւեալ հաստատած պարագային յարմար նկատելով իմ գրութեանս վերջաբանը ընեմ :

Ահա այդ հաստատածը .
« Աղէ՛կ որ ամէն մարդ խօսեցաւ իմ վրայ, աղէ՛կ որ ամէն մարդ լեզուին տարողութեան չափ աղտոնողութիւն զըրցըքնեց քայլերուս չուրջ, աղէ՛կ որ կարգապահեալ մարմիններ ամենէն գարշելի ամբաստանութիւնները պըտըացուցին իմ հաշուս, աղէ՛կ որ առիւծը մահամերձ կարծող Եղովբոսեան իշուն պէս շատ մը Խելք Դաւթիներ իրենց կիցը փորձեցին ինձի դէմ, աղէ՛կ որ անկուսիս օրը հասած երազելով՝ բոլոր թշնամիներս վրիժառուութիւն փութացին, աղէ՛կ որ ասոնք պատահեցան ու ես խօսիլ սպասուեցայ . . . » ու եթէ կուզէք՝ ստիպուեցայ :

Մտաւոր թուով մ'ալ « Գերապատիւ անձնաւորութիւն » եղինիկ եպիսկոպոսի գրիքը պիտի ճշտնեք սոյն խնդրոց մէջ :

Գահիրէ 6 Յունիս 1903
Ե. ՅՈՐՈՍԵԱՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Ս. Բեքերապուրի 8 Յունիս. - Եղուարդ քաղաքը հոս հասած է :

Իրիկ 8 Յունիս. - Բրուսիոյ Հանրի իշխանը արքայական զբօսանալը գնաց Եղուարդ քաղաքը քարտէսը համար :

Ս. Բեքերապուրի 8 Յունիս. - Զարը եւ կաշիւակալ ընտանիքը Երկարուիով Ռըլիկ մեկնեցան :

Բարիկ 8 Յունիս. - Զիկի Լախարարը Պ. Բիշոնիկ ցար յայտնեց աստեղաչափի միջոցակիս համար :

Ռեկ 8 Յունիս. - Ասեմախումրեան լըր լեկ Պ. Դիւսմանա - ապստակալ հակառակուսեան լըր պիտի լըրայ շեշտեց, յայտարարելով որ կառավարութիւնը կրնա դուրս ալն անկն ընկերակալ քարտէսագրիկները որով յասկ եւ ճշդուած են ընդհանրապէս կը մեծեւ անկն անկն՝ որով հայրենիքին Լախարիկ կը պատճառեն :

Հ Ր Ա Ի Է Ր

Տէր,
Ազբատախամ Ընկ. տարեկան Ընդհ. Ժողովը որ տեղի պիտի ունենար անցեալ կիրակի, մեծամասնութիւն գոյացած չըլլալով յետաձգուած է՝ և պիտի գումարուի յառաջիկայ կիրակի, 14 Յունիս, կէս օրէ վերջ ժամը չորս ին Ազգ. Առաջնորդարանի սրահը ի Պէյրի Սուրբէն :
ՕՐԱԿԱՐԳ

- 1. Նախորդ նիստի ատենագրութեան ընթերցումը ու վաւերացումը
- 2. Շրջանաւարտ Գործադիր Ժողովոյ համարատուութիւնը :
- 3. Նոր Գործադիր Ժողովոյ ընտրութիւն :
- 4. Պիտեճէյի որոշում :
- 5. Հաշուեքննիչ անուանում :

Ուստի, կը խնդրուի Ձեր Մեծապատուութեանն որ բարեհաճեք անպատճառ ներկայ գտնուիլ սոյն կարեւոր նիստին և կատարել Ձեր բարեսիրական պարտականութիւնը :

Մնամք յարգանք
Ի դիմաց Դիւսնի Ընդհ. Ժողովոյ Հայկ. Ազգ. Ընկերութեան
Ատենապետ
Ս. ԱՃԻՄԵԱՆ
Մ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Աղէքսանդրիայէն ստացուած նամակներ կը ծանուցանեն թէ՛ Բ. Խոտիլը միւթէմալիզի աստիճանը չընորհած է Ազն. Յակոբ Պէյ Բարթոլոմէ .
— Ն. Բարձրութիւնը նոյնպէս Մէծիսիլի պատասխան չ'տրուած է Աղէքսանդրիոյ հայ վաճառականներէն Ազն. Տիար Վահան Խորասան ճեանի և Խառն Դատարանաց փաստաբան Տիար Միհրան Թեւեանի :

Ձեր ԲԱՆԱԿԱՐԳ
— « Էճիբսն Տէյլի Բօսթ » ի հեռագրուած է թէ՛ Վանի մէջ 18 հայ յեղափոխականներ ձերբակալուած են և շէնքեր գրաւուած են :

— Թուրք կառավարութիւնը Վանի հայութեան պահանջած է որ յեղափոխականները ձեռք տան, հակառակ պարագային սպանուալով ու մարտիկ ընդալը որ արդէն պաշարեալ վիճակ մը ունի :

— Տիրիկէն անհիմն կասկածներով քանի մը հայ երիտասարդներ

ձեռքակալուելով Սվազի բանտը տարուած են :

ՏՈՒՎԱՆՔ

— « Վտակ » ի խմբագրելը 100 ոսկի տուգանքի դատապարտուած է :

— Թլանի ագարակը մասնաւոր իրատէով Սոյ Վանքին թողուած է : կրտսէր թէ՛ թուրք կառավարութիւնը գրաւել կուզէ ագարակը որ 10,000 արտավար տարածութիւն ունի :

Պ. Ա. ՄԱՆԹԱՇԵԱՆՑ

— Պ. Ալէքսանդր Մանթաշեանց ներսէսեան վարժարանը պիտի վերադինէ : 1825 ին ներսէս կաթողիկոսի ձեռքով հաստատուած է սոյն վարժարանը :

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆԻ

ՈՃՐԱԳՈՐԾԸ

ԵՂԵՆԱՆՍԱՏ ԱՏԵՆԻՆ ԱՌՁԵՒ

Շաբաթ օրը՝ (ն. տ.) 6 Յունիս 908, Եղեռնադատ ատենին առջև տեղի ունեցաւ ողբացեալ Արփիար Արփիարեանը սպաննող Պետրոս Հիւսիսեան կողմէն ոճրագործին, և Ջարէհ Գոչեանի՝ որ իբր մեղսակից ամբաստանուած էր :

Ոճրագատ ատենին կը նախագահէր Ահմէտ Պէյ Հէլմի և երգուեալ դատաւորներն էին Պ. Վիլմօր և Ալի Պէյ Չիլիֆիզար : Ընդհանուր դատախազի տեղը բռնած էր Ալի Պէյ Թէվֆիզ և թարգմանի պաշտօնը կը կատարէր Տիար Սարգիս Դարբինեան :

Ամբաստանեալներուն փաստաբաններն էին Ապտէլ Ազիզ Պէյ Յէհմի և մէթրը Մօհամմէտ Չէքի Ապտէլ-Մէկիտ :

Երկու սուսերամերկ ոստիկաններու հսկողութեան ներքեւ ամբաստանեալը աթոռին վրայ քով քովի նստած էին Պետրոս Հիւսիսեան և Ջարէհ Գոչեան :

Ամբաստանագրերը կարգացուելէ յետոյ, նախագահը հարցումներ ուղղեց թարգմանին միջոցաւ, որովհետեւ ամբաստանեալները Արաբերէն բառ մը իսկ չ'գիտնալին յայտարարած էին :

Առաջին վկան էր գիշերապահ Մօհամմէտ Հասան, որ ոճրագործը ձերբակալած էր՝ ոճիրը գործադրուելէն քանի մը վայրկեան յետոյ և յայտարարեց թէ՛ 908 Փետր. 12 ի երեկոյեան ժամը 9 ին հերթապահը լինելով՝ Սօլիման բաշա փողոցին մէջ ատրճանակի արձակման ձայնը լսելով այն կողմը փութացած և տեսած է ոճրագործ Հիւսիսեանը ատրճանակ ի ձեռին փայտելու աճապարանքի մէջ, և հետագային Պանք Նասիտալի մօտերը ձերբակալած է զայն :

Երկրորդ վկան դռնապան սեւմորթ մը՝ Ահմէտ Ապտէլ Նէպի՝ հաստատեց առաջին վկային ըսածները և աւելցուց թէ՛ ատրճանակի երկու հարուածները պարպուելէ յետոյ ինք տեսած է որ դժբաղդ Արփիարեան

գետին ինկած է և հոն հետզհետէ հաւաքուած բազմութեան հետ ինք ալ հետագինգած է ոճրագործը, մինչև Նասիտալի մօտերը՝ իր վաղըին միացնելով ոստիկան կանչելու ազդակները :

Լուսեցան նաև կառապան Տէրվիշ Մուսթաֆաի և ոստիկան Փէթրօ Փաօլօի և Յիթիի վկայութիւնները :

Վերջին վկան էր Կիրակոս Չուրաբեան, որ թէև ոճրոյն ականատես չէ եղած, բայց կարևոր մանրամասնութիւններ թուեց ոճրագործութեան մասին, թէ՛ Հնչակեան Կուսակցութեան կողմէ՛ որուն ինք ալ կ'անդամակցէր 1902 ին, Ջարէհ Գոչեան Լոնտոնայէն Գահիրէ եկած էր, և ըսած իրեն թէ՛ Հնչակեան կուսակցութեան պաշտօն ունի Արփիար Արփիարեանին համար տրուած մահու վճիռը գործադրելու, որովհետև Արփիար Ընկերութեան գաղտնիքները կը մերկայցնէր թերթերու միջոցաւ :

Թէ՛ Գոչեան այդ ատենները չը յաջողելով իր ծրագրոյն գործադրութեան, հետեւեալ տարին ի Վեներաիկ՝ ուր կը գտնուէր Պ. Արփիարեան, գործադրուեցաւ մահու պատիժը Մարտիրոս անունով մէկուն միջոցաւ, թէ՛ այս ոճրախորձը պատճառ եղաւ որ ինք Կ. Չուրաբեան հրաժարի Հնչակեան կուսակցութեան իրեն յարաբերութիւնները պահելով Արփիարեանի հետ, զոր Կ. Պոլիս ճանչցած էր. յարեց նաև թէ՛ Պ. Գոչեան իր մասին ալ ոճրագործական միտումներ ունէր այն ատենէն ի վեր :

Գոչեան հարցուց Չուրաբեանի թէ՛ ո՞ր ամսոյ մէջ ես ձեզի յայտնած եմ թէ՛ կուզեմ Արփիարեանը սպաննել :

— Օգոստոսի վերջերը և Սեպտեմբերի սկիզբները պատասխանեց Չուրաբեան, յորում Արփիարեան ալ Գահիրէ կը գտնուէր :

— Վիեննայի ոճրախորձէն յետոյ յարեց Գոչեան, լսեցի՞ք թէ ես դիտաւորութիւն ունիմ Արփիարը ըսպաննելու :

— Ո՛չ. պատասխանեց Չուրաբեան. Սոյն հարցերէն յետոյ՝ ընդհանուր դատախազը պահանջեց ուրիշ վկաներ ալ լսել և 10 վայրկեանի գաղտնիք մը յետոյ, սրահ մտան ոստիկանութեան հրամանատար Վսեմ. Մէնսֆիլտ բաշա, որուն կը հետեւէր Կուպրան Պէյ Մուսթաֆա և օրինական երգումը ընելէ վերջ, ն. Վսեմութիւնը, Մէնսֆիլտ բաշա, յայտարարեց թէ՛ ինք ուրիշ բան չ'գիտեր, բայց իթէ Հիւսիսեանի ձերբակալուէն յետոյ, իր Աղէքսանդրոյ պաշտօնակցէն տեղեկութիւն ստացած ըլլալով թէ՛ Հիւսիսեան կեղծ անուն մ'է և թէ սա՛յաճախ դիմափոխութիւններ կ'ընէ : Հուսկ ուրեմն Կուպրան Պէյ յայտարարեց թէ՛ Գոչեանի գոյքերը քննելու ատեն շատ մը հայ յեղափոխականներու լուսանկարներ գտած է, որոնք ոստիկանութեան ծանօթ էին, և օր մը Հիւսիսեանը իր գրասենեակը տարած է յուսալով անկէ նոր տեղեկութիւններ ըստանալ, բայց անօգուտ եղած է :

Փաստաբան Ապտէլ Ազիզ պէյ Յէհմի, հարցուց Կուպրան պէյի թէ՛ քանի որ ինք գաղտնի ոստիկանութեան պետ է, կրնայ ստուգել թէ՛ Հիւսիսեան ե՞րբ Եգիպտոս հասած է :

Կուպրան պէյ պատասխանեց թէ՛ իրեն եղած հարցումին չ'պատասխաներ, բայց կը բողբէ իրեն տրուած « գաղտնի ոստիկանութեան պետ » ի տիտղոսին համար, որովհետև ինք Մամուրը-գապր է, իսկ գաղտնի ոստիկանութեան պետն է Սադ օրապաշա Քարթիէն : Այս փոքրիկ միջադէպն ալ փակուեցաւ :

Կանչուեցաւ Արթին Ռափաէլեան անուն 34 տարեկան Թրքահայատակ երիտասարդը, որ յայտարարեց թէ՛ ինք ամիսներ առաջ երկու հօդուներ իրեն ներկայանալով 75 ոսկի խոստացան, եթէ յանձն առնէր ըսպաննել Գոչեանը և մի օր Լարենց թէ՛ անոնք 15 ոսկի կանխիկ վճարելէ յետոյ, գաղտնի մ'ալ առին իրեն, խոստանալով որ ոճիրը գործելէ յետոյ իրեն պէտք եղած դիւրութիւններն ալ պիտի ընծայուին փոխելու համար : Բայց ինք վախճալով՝ այդ իրողութիւնը հաշտուած է գաղտնի ոստիկանութեան պետ Պ. Քարթիէի :

Ուրիշ վկայ մը՝ Հմայեակ Գալլպեան, յայտարարեց սա տարբերութեամբ թէ՛ վերոյիշեալ խոստացուած գումարը 100 ոսկի էր և կալուածական առևտուրի մը կը վերաբերէր և թէ՛ սոյն ինքորոյն ծանօթ են իր երկու բարեկամները Արմենակ Էգնեան և Հանմեան :

Յետոյ պաշտպան փաստաբանները իրենց պաշտպանողականները ըսին և դատաւորները ելլելով խորհրդակցութեան սենեակը քաշուեցան : Թէև դատավճիռը այսօր ան յետաձգուած էր, բայց չենք գիտեր ինչպէս տեղական « Էթիբաթ » թերթը կը գրէ թէ՛ Հիւսիսեան մահուան դատապարտուած է, իսկ Ջարէհ Գոչեան 15 տարի տաժանակիր աշխատութեան :

« Արշալոյս » ի յարգելի աշխատակիցը Աւետիս Էֆ. Պաշեան, որ նոյնպէս դատապարտութեան ներկայ էր, մօտ օրերու մէջ իր տպաւորութիւնները պիտի գրէ « Արշալոյս » ին և արգէն Պաշեան Էֆէնտի անունը բաւական է հաստատելու համար թէ՛ ո՞ր աստիճան շահեկան և անկողմնակալ խորհրդածութիւններ պիտի պարունակեն այդ գրութիւնները :

ԳԵՂԱՆԱԾ ԲՈՒԿՆԵՐ

Անցեալները բասրոն գացի, թէ՛ ինչպէս իր թէ՛ շացի. Սիրանոյն էր քեմիկ վրայ երբոր դռնէն ես ներս մտայ : Յետոյ Ազնիւ Եկար Լաւ, Լաւ նախաձեռն մ'որոյնց անոր վրան ինք խօսեցաւ ինք հասկցաւ՝ Տանք սիկնոյ վիշտն ու ցաւ : Գնաց վանել ցաւ վարժուիմ, Բերուած էր նա որ վարժուիմ Տղայի, ուսուս եւ կրթութեան Ասոր ձեռնով ուշիմ դառնան :

Սա շոս գիցցաւ սովրեցնել Տղոց հօրը, սիրուի՞ սիրելի Պասաւուն աչս էր որ ցաւ սիկիմ Թաղուած էր մեջ անհուն վշտիմ :

Ստեփանեան Տիկիմն էր նա, որ ինչոյի դեր շար կը խաղայ. Համբէրի մեջ ՕՇէլիայի Դերը կրցաւ, ես հոն կայի :

Ինչ կրտսիմ ն'ար ցուցեցիմ, Այքր քոյունի քրք նայիմ : Սա անպատիւ տրք կեղևեր դորս Կարծելով թէ որս կորոյս :

Ստեփանեան դանդաղաբայ Քաշով հարցուց, դու կերբա՞ս աչ, Ինչո՞ւ աչքս սրտն սխաւ Ըստե՛ս անհեմ ն'ար կերբաս, ո՞ր :

Պասաւանեց սա քրտեմ թէ չի կաւ ես աչ աչս օրեմ. եւ պատմեց նա ամեն ինչ որ Պասաւած էր իրեն աչս օր :

Տիկիմ Ազնիւ դժգոն դեմով Թոյոց գեւայ սիկիմն քով. երբոր ասուիմ ինքիմն ինք Միւսակ ցաւն մեջ անեկիմ, Յարմար առիքր սեպեցիմ

Իրար գեղած հաղորդեցիմ, նոյն միջոցիմ իր հեգ կիկր Մսար սեսար ասուց դիմք :

Իսկ վարժուիմ երբ ցայն սեսար Գաշեց ձեռքիմ ձգեց փախար. Ստեփանեան իրեր գաճաճ Տեղը մնաց արձան կճած :

Եւ վերապէս սա խոսեցաւ թէ՛ կր սիրեր ու մեկնեցաւ : Տիկիմն էր քաշուր Անդրանիկ Բայ մի ձեռով փիչ մալ գովիկ, Միխրաւեղ Եկար իր ֆոյր եւ վերջացաւ մի վարագոյր :

Երկրորդիմ էր Աղաքեկեան որ շիրտն շոս փիչ մի քան, 2ի հասկցանիք թէ ինչ քաւ Ըսաւ, քաւ ու դորս եչաւ :

Յետոյ Եկար Ստեփանեան Խնորեց կիկեմն ապանարգան. Իսկ Բերուեան երբ ցայս քեց, Բարկաթեանը դորս մեկեմ վազեց :

Ողեց վիթ շոճեղ անկէ Բայց յիշեց որ նա իր հայրն է :

Վերջինիմ մեջ քանակուեցաւ, եւ վերջապէս ւսմորուեցաւ : Պե՛տ էր սեսնեղ հոս մօրք դեր որ Սիրանոյն կը կասարէ, թէ որ պատմեմ աղաղոյիմ Գուն կը քեմեմ կարքսոցիմ :

Ասոր հաւար հարեանցի Ըսեմ շար էր, ես աչ շացի. Ինչ հե՛ս շացար վերջսունեմ Փոքրիկ ցաւն նօրքուեմ :

Գիշեր ասեմ աչս ասիճան՝ Թասրոն քեռեղ փոքրիկ ցաւն է՛ յախցեալ մեր հայ կանանց Օսար ազգաց մեջ լեմ սեսաճ :

Դժբաղսարար աչս շար խաղը Շոս փիչ եղաւ սեսնոյներք. Ո՞ր եմ անեմ որ փքեմիմ Սիրանոյն կը կարգաւեմ :

— Այս մեջ մի քար եւ սեսնայի, Աչ հոգս յեր թէ մեմեմի :

Օր մը երբոր ձամբուն վրայ Մանցեմ մեկուն հանդիպեցայ, Հարցուցի թէ ո՞ր է֛, չիգա՛ք Թասնը միջս սեսնեմ զիսարկ :

Գիտե՛ք թէ ինչ պատասխանեց որ մեկ խօսով քերանս գոցեց : — Միմ վարկաթի կանրքեմեմ Դուրք կեցած հարաիթ, Ժողովորդք երբ գիմիմ սեսնե՛ ներս չի մեճ շոս դորս կեղևե :

Իսկ որիցներ ի իրք վերեն
Խաղ սաղիսեն ջուր կը խմեն,
Կարծես մեծ ու փոքր շնուներ
Իրենց ձեռքով եւ սեղծներ:

Մի քանիսն ալ իրք հալկիք
Ներս դուրս մեկն գերք քարեկիրք
Երբ կիսն սեւեւեն հրաւնցումեն.
Աստիճակով հոն կը մեկնեն:

Անա պատճառ, ինչու համար
Ժողովուրդը քստոն չի գար:

Յանցարոր դու ես սիկիս
Որ չի գիտար ղնարկը քանիս
Շուրջը երոյ մարդոց մեքեն
Բեղի պատուէլ որով գիտեն:

ԹՈՓԱԼ ԵՆՅԹԱՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՍՈՒՐՅԱՆԴԱԿ

«ՄՇԱԿԻՆ ԵՍՂԿԱՔԱՂԸ»

Թարգիչէն Մարտ 27 թուակա-
նաւ «Մշակ»-ին ուղղուած թղթակ-
ցութիւն մը հետեւեալ տխուր խոր-
հրդածութիւնները կը պարունակէ,
զոր նոյնութեամբ կ'արտագրենք:

Ք Վանի գէպըրը որպէս ա-
մենամեծ ապացոյց կարող են ծա-
ռայել մեզ, խորհրդածելու համար
թէ Ինչպիսի յեղափոխութիւն ու-
նինք հայերս և թէ միտաւանակ
համերայնութեան փողոհարները,
որոնք իրանց ազգակիցներին հետ հա-
մերայնիւ չ'կամեցան, Ինչպէս են
չահագործուած համերայնութիւն բա-
ռը, կեղծ ու պատիւ, սուտ ու յե-
րիւրած լուրերով, յոգեւածներով
քող փչում միամիտ, կամ ակամա-
յից համակերպող ընթերցողներին
աչքերին: Փողոհարները շարունակ
լուրեր են հաղորդում թուրք և հայ
համերայնութեան մասին և կարծել
տալիս, որ այսօր կամ վաղը ալ զ
համերայնութեան շնորհիւ թուրք-
քիան արքայութիւն կը դառնայ,
ուր գայլը և գառը միասին կարա-
ծեն: Երանի չէր այդ երազը բարին
կատարուէր ոչ թէ այսօր վաղը,
այլ նոյն իսկ երկար տարիներէ յե-
տոյ . . .

Տէրքի Դաւիթը դատաւանց:
Ինչպիսի յեղափոխական է ե-
ղել Դաշնակցական անօրինակ մատ-
նիք, որը ինչպէս խօսվում է, չը
հանդուրժելով իր նշանածի առե-
ւանգման, անպատուութեան, փո-
խանակ ուրիշ միջոցներով գոհաց-
նելու իր վրիժաբորբը կիրքերը և
պատժելու յանցաւորին կամ մի
քանի յանցաւորներին, մասնու-
թեան է դիմում և մեծ չարիքի ու
անմեղ զոհերի արեան հոսման պատ-
ճառ դառնում, այսպիսի անօրինակ
ակտով նա ապացուցանում է, որ
ինչպիսի յեղափոխական է եղել նա
և ինչքան արժանի այդ սուրբ կոչ-
ման:

Լռում եմ և բառ չեմ գրտ-
նում որակելու այն հրէջին, որը յե-
ղափոխական և «ԵՆՅ» լինելով հան-
դերձ պղծում է ընկերով ընտանե-
կան Սրբութիւնը, այն սրբութիւնը,
յանունն որի վերնուրագրուել է ինքը,
յանունն որի տառապարտ է տարիներ
հայութիւնը:

Այս խայտառակութիւնից յետ
մեր ազգասէրները, այսօր սրաի
որպէս միութարութիւն, փողոհար-
ցին, որ հայ և թիւրք համերայն-
խութեան շնորհիւ վանում կոտու-
րած չեղաւ, մինչդեռ հայ յեղա-
փոխականները բաւականին թուրք
զինուորներ շարժեցին:

Յայտարարեցին նոյն իսկ, որ

թուրք յեղափոխականները իրանց
յայտնել են, որ «թուրք խուժա-
նը մեր դիակներու վրայով միայն
կարող է գալ Ձեզ կոտորելու»:
Որքան անորժ է հնչում մարդու
ականջներին յիշեալ նախադասու-
թիւնը, և երեւի այդ խօսուածից ո-
գեւորուած և սիրտ առած մեր լա-
ւատես յեղափոխականները փորձում
են սպաննել իրանց երբեմնի ըն-
կեր Դաւիթին, որի մահը պակասում
է մօտ հարիւր հայ անմեղ զոհե-
րի արիւնով, դեռ չեմ հաշուում
թուրք յեղափոխականներին անհա-
մար դիակները, որոնց վրայով ըստ
վերոյիշեալ յայտարարութեան թուրք
յեղափոխականները պիտի աճցած լի-
նի թուրք խուժանը հայերին կո-
տորելու համար (sic):

Պարզեք ճէֆերի շնորհիւ ի-
րանց ընկեր մասնիչի մահը մէկ
հարիւր անմեղ նախատակներին ա-
րիւն - այս բոլորը միասին համար-
վում է «հայ յեղափոխութիւն»:

ԻՄԲԱԳՐԱԿԱՆ ՁԵԿՈՑՑ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՑ ԿՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

«Արշալոյս»-ի Աղէքսանդրիայ
ԼԻԱՉՈՐ Գործակալ - ներկայացուցիչն
է Տիար Յ. Տուրսունեան՝ թուակա-
նէս միջոց ներկայ առաջին շրջանի
աւարտումը. այսինքն 908 Գեկտ.
Յ1, և վերնորելի է:

Ծանուցմանց, տպագրութեանց
բաժանորդագրութեանց և նիւթա-
կանի հետ կապ ունեցող առևտրա-
կան բոլոր խնդրոց համար կարելի է
համաձայնիլ իրեն հետ, և վճարում
ընել «Արշալոյս»-ի Խմբագրութե-
նէն կնքեալ և Քարտուղարէն ու
Մատակարարէն ստորագրեալ ստա-
ցականներու փոխարէն:

Առանց վերոյիշեալ ստացական-
ներուն եղած վճարումներու համար
Խմբագրութիւնը ո' և է պատաս-
խանատուութիւն չ'ստանձներ: 1-3

ՆԱՄԱԿ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՑԷՆ

Հետեւեալ յօդուածը նամա-
կագրին պատասխանատուութեանը
ներքե հրատարակելով, քննադատ-
ուող կողմին կը թողունք աւելի
լուսարանել սոյն խնդրը, եթէ
պէտք տեսնուի: ԽՄԲ.

ՆՈՒԻՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մայիս 31 կիրակի. կէս օրէն վերջ
Լիֆոնթիի սրահին մէջ տեղի ունեցաւ
առևտանայ երկրասարգ Պ. Լեւոն Պողոս-
եանի առաջնորդութեամբ քառաձայն
«Համերգ» ը ի նպատակ Պ. Լ. Պողոս-
եանի:

Հ. Յ. Դաշնակցութեան Աղէք-
սանդրիայ նիւթակոմիտէն ամէն ջանք
ի գործ դրած էր հանդէսին յաջող ել-
քին համար. որովհետեւ Օ)Յ 20 պիտի
ստանար գոյացած հասոյթէն: Եւ ասոր
համար ամէն կերպ ազդեցութիւն ի
գործ դրած էր նա մանաւանդ՝ սրպէս-
գի' 60 ի չափ երգող երկսես երիտա-
սարդները առանց հետաքրքրուելու կա-
տարեն իրենց վրայ ծանրացող նուր-
րակաւ պարտականութիւնը եւ զժողու-
թիւն չի յայտնեն:

«Համերգ»-ին կազմակերպութեան
«սաքարք» ը զոր ձեռք առած էր նա-

թակոմիտէն, «փարոս» ի պէս ուղե-
ցոյց լոյս մը կրնայ սփռել ամէն անոնց՝
որոնք մութի մէջ խարխափելով տա-
կաւին չեն կրցած գիտակցօրէն տեսնել
շահագործումի և նուիրակաւ պարտակա-
նութեան տարբերութիւնը:

Գաղափարի, իտէալի շուրջ հա-
ւաքողները անհասնելու իբր շահու-
աղիւր կը գործածուին տակաւին: Ոչ
թէ մարդկութիւնը, այլ ժողովուրդ-
ներու ճակատադիրը յեղաշրջելու նպա-
տակը ունեցող կազմակերպութիւննե-
րուն մէջ իսկ զանազան մեծամասնու-
թիւնը չէ հասած տակաւին այն աստի-
ճանին, եւ ասոր համար է որ գրեթէ
ամէն տեղ եւ ի մասնաւոր յ' Աղէք-
սանդրիա, մէկ կամ երկու անհատներ
մէկ կողմ թողլով իրենց ուղեցոյցի կո-
չումը. քմահաճոյքի համեմատ կմբռնեն
ու կը մտածեն. եւ իրենց հետեւորդ-
ներն ալ մեքօ - զօրիով կատարեն սու-
րիկ - փուրիկ հետեւիլ - մեք կըսենք
կուրօրէն: Թող անոնք ըսեն՝ «գիտակ-
ցօրէն»:

Կարելոյ չեղում մը չէ՝ երբ յեղա-
փոխական անունը ճակատուն կրող
նիւթակոմիտէի անդամները, փոխանակ
չանագործումի դէմ կուրողներ հանդիսա-
նալու, կազմին պատկանող աղաքները
կը հաւաքեն, ու առանց անոնց հաս-
կըցնելու նպատակը «նուիրական պար-
տականութիւն» անունին տակ զանոնք
դէպի բեմ կը քաշեն:

Եթէ «ընկերական պարտականու-
թիւն» մ'է որ կընեն Պ. Լ. Պողոսեանին
այն ժամանակ պէտք է ինչ գիտել ուրիշ
միջոցի աւելի պարզ եւ աւելի համոզիչ
որ ոչ մէկ առարկութիւն ու քննադատ-
ութիւն չէր վերցնէր. այն է, հայ-
թայթել անոր մասնագիտութեան վե-
րաբերեալ պաշտօն մը, եւ կամ մասնակի
որոշ ապրուստի միջոց մը գտնել. ոչ
թէ կազմակերպութեան պատկանող ու-
ժերը «նուիրական պարտականութիւն»
ի հմայքով ծառայեցնել անհատի մը
հաշուին:

Այս յօդի եւ միանգամայն դոնձիկ
գործունէութիւնները մասնաւոր ընե-
լով երբէք նպատակ ունեցած չենք ըլ-
լար Դաշնակցութեան դէմ հակառակու-
թիւն ստեղծելու, այլ՝ սա մէկ - երկու
մարդոց Դաշնակցութեան ծրագրին եւ
ողբոյն հակառակ ունեցած մասնաւոր
ըմբռնումներն ու մտածումներն են որ
կը մերկացնենք՝ հակցնելու համար
կուրօրէն հետեւողներուն թէ՛ ուրիշ բան
է յեղափոխական - հանրային գործերու
մէջ «նուիրական պարտականութիւնը»,
ուրիշ բան է անձի մը օժանդակիլը:

Հակառակ պարագային տարբեր
սկզբունք է, երբ այս մարդիկները ի-
րենց մտածումներուն մէջ հարբուիկ
բոնուին՝ Դաշնակցութեան ալ քիթը
պէտք է որ վազէ:

Բայց միեւնոյն ասան չենք կըր-
նար համոզուել թէ Դաշնակցութիւնը
չահատակութեան ապարդէղ մըն է եւ հոն
մտնողները իրաւունք ունին իրենց յօ-
դի գաղափարները եւ անձնական ձեռ-
տուները առաջ քաշելու:

Սա այժմ այսքան, ԱՐՄՍ
3 Յունիս 1908
Աղէքսանդրիայ

ՍԵՂԱՆՍԻՈՐԱԿԱՆ ՏՈՒՆ

Մուսի փողոց թիւ 6, Սիմիրի մատնա-
ձիւղին իով, Ժիւսքերի դիւնաց:

Կը գնէ եւ կը ծախէ հրապարակի
վրայ շրջաբերող բոլոր կարելոյ արժե-
թղթերը, մասնաւորաբար՝ Բրէսի Ծօն-
սիէի հին եւ նոր, Բուսէլի երկաթուղ-
եաց եւ Բանամայի ֆրանսական վաւե-
րացնալ արժեթղթերը, որոնց սկզբէն
ց'այսօր շահող թիւերունց ցուցակներն
ալ ունի:

Արժեթղթերու արդի խիստ նպաս-
տաւոր գներէն կրնան օգտուել Նգիրպ-

տարնակ մեր ազգայինները մեզի դի-
մելով:


Մասնավճարներով - 25, 50, 100 -
կարելի է արժեթղթերու տիրանալ, եւ
մատչելի պայմաններով՝ աւանդի փո-
խարէն՝ փոխառութիւններ կնքել:

Սեղանաւորական ամեն տեսակ
գործանութեանց, եւ առևտրական
ամեն կարգի Պոլսոնը զեղջիլու պատ-
րաստակամութիւն:

Սեղանաւորական եւ Պորսայի գոր-
ծանութիւններ եւ ա'յս կարգի գոր-
ծերու վերաբերեալ զաւանդներն եղած
յանձնարարութիւններ փութով կը կա-
տարուին:
12-50

ԱՐՄՍԵԱԿ ԹԱՇՃԱՆ

ԹՈՒՐԻՍՏ ՍՏՈՐ
(TOURISTS' STORES)
Նուպար քաջա փողոց՝ Խշիվիալ Օ.
թիւին դիւնաց



Բերքութիւն «Crossett» Ամերիկայի
լաւագոյն գործարանն է. դիմացկուն
եւ հանդիսա կոչելիներու. որոյ Եգիպ-
տական վիսկ ներկայացուցիչն է
ԹՈՒՐԻՍՏ ՍՏՈՐ, 19-43
ԳԻՆՆԵՐԸ ԽՄՍ ՉԱՓՍԻՈՐ

ՏԵՎՐԻՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՇԻՏԱԿ ԵՂԻՐ, Ամէն առաւօտ տէվրիչ
մը կը ներկայանար թագաւորին ու
կ'ըսէր.

— Դուն չիտակ եղի՛ր, ծուռը իր պա-
տիժը պիտի գտնէ:

Թագաւորը շատ ձգը հաճոյանար այս
խօսքէն, ու մեծ պարգեւներ կուտար
անոր:

Պալատականները խիստ կը նախա-
ձէին, ու կուզէին կիրպ մը գտնել տէր-
վիչը վարկարեկելու համար թագաւո-
րին աչքին առջև:

Ու պատահեցաւ որ ակուսի սաստիկ
ցաւ մը ունենալուն պատճառով՝ տէր-
վիչը քանի մը օր թագաւորին շայցե-
լեց, Հակառակորդները սկսան այլևս
այլ սուտերով թագաւորին ականջները
լեցնել:

Շարքի մը վերջը՝ տէրվիչը քիչ մը
աղկկ զգալով ինքզինքը, բերանը կա-
պած գնաց վեհափառին քով, ու կրկնեց.
— Դո՛ւն չիտակ եղի՛ր, ծուռը իր պա-
տիժը պիտի գտնէ:
Թագաւորը պարկ մը ոսկի նուիրեց
իրեն:

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻՍԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿՂ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷԲՅԷ



ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

ՅՍՏԿԱՆՈՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊՍՀԱՆԱԷ

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի ածան գներով ունենալու կամ վախելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ եւրոպական սիկարէթներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար հարկ չ'կայ հոս ու հոն ժամափաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին .

Պարսկական ամենաընտիր թէմպէթի ալ և ալ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալի է .

Մեր վաճառատունը վերջապէս, գիներու ածանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և ալ ամէն տեսակէտներով, և մանաւանդ գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անփոփոխի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և պուտար թուով եզած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

Դուրս ելլելուն պէս, սպարապետը ներս մտաւ ու ծնկի վրայ գալով բացազանչեց .

— Ո՛ր ամենագէտ թագաւոր, անշուշտ հասկցար թէ տէրիչը ինչու բերանը կապեր էր : Կը յուսամ թէ գինիին հոտը ձեր սուրբ ունեցներուն պիղծ անհանգստութիւն մը չի պատճառեց : Այդ ծառայ զանի օրէ ի վեր ինքզինքը գինեմոթեթեան ու շուտաուրեւ շուրիի էր . եւ Ձեր վսեմափայլութեան այցելել զանց ըրած :

Միւս օրը երբ քեզ վրէշը պալատ եկաւ ու սովորական բանաձևը կրկնեց, թագաւորը առանց երեսը նայելու, արքայական հացազործապետին ուղղիւմ նամակ մը տղաւ անոր :

Տէրվիշը ուրախ, զուարթ մեկնեցաւ : Սպարապետը զայն այս վիճակին մէջ տեսնելով՝ կասկածեցաւ, թէ թագաւորը շատ մեծարժէք պարգև մը տուած ըլլալու էր այս անգամ : Մտնելով աւտոն հարցուց .

— Հայր տէրվիշ, հարցումք յանցանք թող չի գեպուի, վեհափառը ինչ պարգևեց այս առաւօտ :

Տէրվիշը նամակը ցոյց տուաւ .
— Հայր տէրվիշ, քեզի 1000 ոսկի, եթէ այդ նամակը ինծի տաս որ հասցէին տանիմ :

Տէրվիշը աւելորդ բեռէ մը ազատելու փութկոտութեամբ նամակը սպարապետին յանձնեց, ու խնդրեց որ հազար ոսկին ալ աղքատներուն բաշխէր :

Յաջորդ օրը տէրվիշը նորէն գնաց, ու թագաւորին առջեւը կանգնելով՝ պոռաց .

— Դուն չիտակ եղի՛ր ծուռը իր պատիժը պիտի գտնէ :

Թագաւորը շուտաւ հարցուց .

— Նամակս ինչ բրիբ :

— Սպարապետը առաւ ինձմէ՛ Ձեր վեհափառութեան հրամանը աւելի խընամբով կատարելու համար :

Թագաւորը անմիջապէս ելաւ տեղէն, փաթթուեցաւ տէրվիշին, ու բացազանչեց :

— Իրաւունք ունիս, Հայր տէրվիշ, և դուն չիտակ եղի՛ր ծուռը իր պատիժը պիտի գտնէ : Այդ սպարապետին հաւատարմով՝ քեզ շատ անգամ ու կեղծաւոր մարդ մը կարծեցի . եւ գրեցի հացազործապետին որ նամակս իրեն յանձնողը փուռը նետէր : Դուն չիտակ մարդ էիր, ու նամակը տանիլ սպարապետին վիճակուեցաւ, որուն աճիւնն իսկ թեւրիւս կարելի չըլլայ գտնել հիմայ :

Աւանդովէ պ մը վերինը, սակայն, կեանքի մէջ այնքան յաճախ սկանաւտես կ'ըլլանք զրպարտակոծեալներու անհրեակայելի յաղթանակներուն ու անոնց հակառակորդներու անյարբը ջախջախութիւն, որ անիրաւութիւն մը պիտի չըլլայ զայն ճշմարտագէտ մը նկատել :

(Պոսթոն) ԱՐՇԻԻ

ՏՕՐՔ ԵՍՍԷՐ Լ. ՃԷԲՈՂԵԱՆ

ՇՍՐԱ ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱ, ԹԻՒ 20

Ամերիկայի համալսարաններէն վկայեալ և անուանի հիւանդանոցներու մէջ գործնական փորձառութիւն ստացած բժշկուհի . յաջողակ վերահատճումներով և անոնց ցաւ պատճառելու :

Մանկաբարձուհի և մասնագէտ՝ կանանց ծննդական գործարաններու և արտոգրիտեան արտերու, իսկ մանուկներուն՝ ամէն տեսակ հիւանդութիւններու :

Կատարեալ խնամքով և գիտական նորագոյն մեթոտներու շնորհիւ հիմնապէս կը բժշկէ իր խնամոց յանձնուած հիւանդները .

Հիւանդ կ'ընդունի ամեն օր կիս օրի յետոյ ժամը 2-5

Ս.մ.է.կ երեւոթքի սղգոսաց շքի դարմանում :

Ե Ա Ս Ո Ւ Գ Ի Ր Ք Ե Ր

« Արշալոյս » ի տպարանին մէջ, Շէրիք բաշայի պարտէզին գիմաց՝ կը վաճառուին Պ. Արշալ Չօպանեանի հետեւեալ հեղինակութիւնները .

1. Քեթուածներ Գին 5 Ֆր.
 2. Մկրտիչ ՊէշիկՅաշեանի կեանքն ու գործը Գին 5 Ֆր.
- ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ
- Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ
- « 2 Հիւլէն 50 »
- « 3 Սուլթան Համիտ ինչպէս մեռաւ Գին 1 Ֆրանց
- Ազգային սահմանադրութիւն սակաւաթիւ օրինակներ Գին 12 ՂՂ .

ՎԻՃԱԿԱՎԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՎԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ

ՍՍԵՆԱԳՐՈՒ

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԵՏԱՔՈՂ ԲՆՈՒԱՅ 400 ր/իւ թաղկացած Թիւր 5 ՂՂ . ՈՂՂ

Մեծ սրճարան Հայկականի մէջ ի ցոյց դրուած սոյն աննման մետաքսայ ձեռագործի վիճակահանութիւնը՝ որուն անցեալ Փետրուար ամսոյ մէջ տեղի ունենալը ծանուցուած էր, բայց ինչ ինչ պատճառներով յետաձգուած է . անոնք որ սոյն չքնաղ զարդը ունենալ կը ցանկան, ժամ առաջ թող դիմեն « Արշալոյս » ի տպարանը Տ. Գէորգ Փափագեանի մնացեալ սակաւաթիւ տոմսերէն գնելու համար, որմէ անմիջապէս յետոյ տեղի պիտի ունենայ վիճակահանութիւնը Հայկական սրճարանի մէջ կանխաւ ծքանուելով :

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԻՆԿԷՐ

Պալատի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց Գաթէ Տը Լա Պուրսի կից
Հին ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱԿՆԻՆԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկլերներն են եւ ասոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է :

400 և աւելի վիսյակաւ եւ միասյակով վարձատրուած, Երասխալուրեալ մեքենաներ .


ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ Ա.Ո.Ա.ՂԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արձուսահանդիսին մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՑ ԿՍՅՍԵՐԱԿԱՆ
ԿՍՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՐԻՆ ԵՒ ԹԱԳԱՌՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Ա. ԽՏԻՎԱՆԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Սինկլեր յաւկանչիմ

Զրի դասեր և նորոգութիւններ, Սինկլեր մեքենայից համար, յաճախորդատուներուն մէջ .

Փոխանակութիւն հիներու եւ նորոգութիւն ամեն կարգի մեքենայից



Գին ԶԱՓԱՒՈՐ

ՍՍՐԳԻՍ Թ. ԹԱՇՇԱՆ

Նորոգիչ կարի մեքենաներու, ֆոֆոկրաթներու եւ կաղի վառարաններու :

Տասներկու տարիներ « Սինկլեր » ընկերութեան ջով մեքենայարդարութեան զբաղելէ յետոյ, այժմ զինավաճառ Զախարիա Գոնստանթինուի ջով պաշտօնեալ է գէնքերու եւ մեքենայարդարման ճիւղին մէջ :

Կարգ մը բարեկամ յաճախորդներու խնդրանաց վրայ, պաշտօնէն դուրս ունեցած իր պարապոյ ժամերը պիտի տրամադրէ կարի մեքենաներու, ֆոֆոկրաթներու, կաղի վառարաններու, նորոգութեանց եւ յարգարման :

Առ այժմ իրեն պէտք ունեցողները փոխանակ հոս ու հոն թափառելու կրնան դիմել իր սուրբ Պապը - Շէկրէի կողմը Շարա Պէղզալ՝ կրնան հարցնել նաեւ Մեծ Սրճարան Հայկականի Տնօրէններուն, եւ գարձեալ զիւրութեան համար քարթ բուստալով մը կրնան դիմել « Արշալոյս » Տպարանին . նշանակելով իրենց հասցէն, Փողոցին անունը եւ Տունին թիւը :

Իր նորոգութեանց վարձքը պիտի ստանայ իրեն յանձնուած աշխատութիւնները լրանալէ եւ փորձեր կատարուելէ յետոյ :

Կարի նոր մեքենաներ ալ կը վաճառէ :

19 - 50

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

ՇԱՐԷ ՄՈՒՀԱՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ-ԷԼ-ԽԱԼԻՔ

Շարէ Մուհամէտ Ալիի ամբողջ գրածին վրայ եղող նպարաժաճաններուն մէջ, մեր վաճառատելին միակն է որ ապրանքներու թարմութեան եւ մաքրութեան շնորհիւ մնալուն գիրք մը բունած է տարիներէ ի վեր :

Նպարեղներու վերաբերեալ ամէն ինչ՝ փոքր թէ մեծ քանակութեամբ գորդներու համար, անթերի են սոյն վաճառատելոյն մէջ :

Մեր յաճախորդները գոն թողելու նպատակաւ՝ սպառելի ապրանքներու ընտրութեան եւ գնումին ատեն շատ խնամք եւ նոյն իսկ բժախորդութիւն կընենք . Ուրեմն նպարեղէն վերաբերեալ ամէն սպարանք թարմ է եւ մաքուր մեր ջով :

Կշիռը, որուն համար ուրիշ շատ տեղեր զանգատանաց պատճառ տուած է, մեր ջով գոհունակութիւն միայն ստթած է . վկայ մեր բազմաթիւ յաճախորդները, որոնք միշտ զոն մնացած են :

Ձեր տունին նպարեղներ բոլոր պէտքերուն համար դիմեցէք ի Պապ-Էլ-Մալք՝ մեր վաճառատելին եւ չ'պիտի զղջաք :

18-41
ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍՏՐՅԱՆ